Երեկոյեան ժամը զարկեցին, աբեղան վեր կացաւ, ինձ եւս հրաւիրելով իր հետ ժամ գնալ: Ես մեծ յօժարութեամբ կը գնայի, եթէ Ասլանը ներսից չկանչէր ինձ: Ես նրան նոյնպէս պառկած գտայ, որպէս թողել էի:

— Ի՞նչ է պատահել քեզ, — զարմանալով հարցրի ես:

— Ոչինչ, փոքր-ինչ վատ եմ զգում ինձ... — պատասխանեց եւ շուռ եկաւ միւս կողքի վրայ:

— Երեւի ծովից դարս գալուց յետոյ այնքան երկար մնացիր թրջած հագուստով, որ մրսեցիր:

Նա ոչինչ չպատասխանեց, միայն խնդրեց, որ բաց անեմ լուսամուտները: Խուցի մէջ օդը խեղդելու չափ ծանր էր: Բայց ինչպէ՞ս պէտք է բաց անէի լուսամուտները, որոնք իմ հասակից շատ բարձր էին: Այս կողմ ու այն կողմ ընկայ, որոնեցի, վերջապէս մի բան գտայ, դրեցի ոտներիս տակը եւ վեր բարձրացայ: Լուսամուտները փեղկեր չունէին. մի-մի փայտեայ շրջանակ միայն ագուցած էր իւրաքանչիւրի մէջ, եւ նրանց վրայ, ապակիի փոխարէն, մեխած էին հաստ, մուգ — դեղնագոյն թերթեր, որոնց վրայ երեւում էին գունատոած գրութեան հետքեր: Ես պոկեցի երկու լուսամուտների թերթերն եւս: Երբ Ասլանը այդ թերթերին նայեց, ասաց.

— Մագաղա՞թ է: Դրանք այն Խորենացու պակաս թերթերիցն են, որ մենք ժամատան խորանում տեսանք:

Գիշերը Ասլանը իրան աւելի վատ էր զգում: Գլուխը սաստիկ ցաւում էր եւ գանգատւում էր սաստիկ ծարաւից: Բայց մաքուր ջուր անկարելի էր գտնել այստեղ: Ծովի ջուրը խիստ դառն էր, հորերի ջրերը նոյնպէս դառնահամ էին: Մաքուր ջուր ստանում էին հալած ձիւնից, որը ձմեռը հաւաքելով առանձին ստորերկրեայ սառցատներում, ամառը գործ էին ածում: Իսկ այս տարի այդ մասին եւս հոգ չէին տարել: Կար եւ ջրամբար, որի մէջ առանձին ճանապարհներով հաւաքւում էր անձրեւի ջուրը: Բայց ջրամբարը, քայքայուած լինելով, այլեւս ջուր չէր պահում:

Այդ բոլորը տանելի կը լինէր, եթէ մեզ թոյլ տային փոքր-ինչ քնելու: Ամբողջ գիշեր հանգստութիւն չտոին մեզ: Ամէն րոպէ յայտնւում էր ժամկոչը փայտեայ ծանր օթեակը ձեռին եւ բոլոր խուցերի դռները հերթով ծեծելով, հասնում էր մերին եւ նրա վրայ եւս երեք անգամ զարկելով գոչում էր. «ժամ համեցեք»:

Դրանք այն «մշտապաշտօնէ կոչուած անապատականների կարգիցն էին, որոնք, բացի օրոայ սովորական ժամերգութիւնները, որ կատարում էր ամբողջ միաբանութիւնը միասին, կատարում էին նաեւ մշտական աղօթք-